


ՀԱՍՏԱՏՎԱԾ Է ԵԹՎՊԻ-Ի ՊԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ

« 30 » օգոստոսի 2016թ. նիստում

ՌԵԿՏՈՐ Է. ԱՌԻՐԱՅԱՆ



ԵՐԵՎԱՆԻ ԹԱՏՐՈՆԻ ԵՎ ԿԻՆՈՅԻ ՊԵՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԱՐՎԵՍՏԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ, ՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ
ՖԱԿՈՒԼՏԵՏ

ԲԱԿԱԼԱՎՐԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ
ԱՌԿԱ ՀԱՄԱԿԱՐԳ

ԱՐՎԵՍՏԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

մասնագիտություն

ՍՑԵՆԱՐԱԴՐԱՄԱՏՈՒՐԳԻԱԿԱՆ ԱՐՎԵՍՏ

մասնագիտական կրթական ծրագիր

Ուժի մեջ է 2016-2017 ուսումնական տարվանից

Երևան, 2016թ.

ԲԱԿԱԼԱՎՐԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍՆԱԳԻՐ

1. Ծրագրի անունը

Սցենարադրամատուրգիական արվեստ

2.1 ՈԱՇ մակարդակ

Ազգային որակավորումների շրջանակ, 6-րդ մակարդակ

2.2 Աստիճան / որակավորում

Արվեստի տեսության և պատմության բակալավր

2.3 Կրեդիտների քանակը

240 կրեդիտ

3. Բուհ

Երևանի թատրոնի և կինոյի պետական ինստիտուտ

4. Ֆակուլտետ

Արվեստի պատմության, տեսության և կառավարման ֆակուլտետ

5. Ամբիոն

Արվեստի պատմության և տեսության ամբիոն

6. Ուսուցման լեզու

Հայերեն

7. Ուսուցման ձևը

Առկա

8. Լիցենզավորված է /
հավատարմագրված

ՀՀ ԿԳՆ

Բակալավրի կրթական ծրագրի իրականացման լիզենզիա Բ №0018, 02.04.2016թ.
(ՀՀ ԿԳՆ հրաման №231-Ա/2, 02.04.2016թ.)

9. ԿԾ-ի մուտքի պայմաններ

Առնվազն միջնակարգ կրթության ավարտական վկայականի կամ միջին մասնագիտական աստիճանի առկայություն:

Ընդունելությունը կատարվում է ԵԹԿՊԻ-ի կողմից մշակված և ՀՀ Կրթության և գիտության նախարարության կողմից հաստատված մասնագիտական ծրագրերով:

10. Ծրագրի կառուցվածքը և նկարագիրը

«Սցենարադրամատուրգիական արվեստ» մասնագիտական կրթական ծրագրի ուսումնական պլանը բաղկացած է չորս կրթամասից՝

ա/ ընդհանուր կրթամաս՝ 40 կրեդիտ,

բ/ ընդհանուր մասնագիտական կրթամաս՝ 46 կրեդիտ,

գ/ մասնագիտական կրթամաս՝ 134 կրեդիտ, այդ թվում՝

ճանաչողական պրակտիկա՝ 2 կրեդիտ,

ուսումնասարտադրական պրակտիկա՝ 2 կրեդիտ,

նախադիպլոմային պրակտիկա՝ 6 կրեդիտ,

ավարտական աշխատանք՝ 15 կրեդիտ,

ավարտական աշխատանքի պաշտպանություն՝ 15 կրեդիտ,

դ/ կամընտրական դասընթացներ կրթամաս՝ 20 կրեդիտ:

Ընդհանուր կրթամասը ներառում է բովանդակային կառուցվածքով և կրեդիտներով ամրագրված դասընթացներ (ուսումնական մոդուլներ), որոնք նպաստում են բարձրագույն մասնագիտական կրթության տեսական հենքի ձևավորմանը՝ հումանիտար և սոցիալական ոլորտներում:

Ընդհանուր մասնագիտական կրթամասը ներառում է բովանդակային կառուցվածքով և կրեդիտներով ամրագրված դասընթացներ (ուսումնական մոդուլներ), որոնք նպատակաուղղված են ընդհանուր մասնագիտական գիտելիքների, հմտությունների և կարողունակությունների ձևավորմանը:

Մասնագիտական կրթամասը ներառում է բովանդակային կառուցվածքով և կրեդիտներով ամրագրված դասընթացներ (ուսումնական մոդուլներ), պրակտիկաներ, որոնք նպատակաուղղված են մասնագիտական գիտելիքների,

հմտությունների և կարողունակությունների ձևավորմանը, և ավարտական աշխատանքի պաշտպանություն, որի նպատակն է ուսանողի մասնագիտական ձեռքբերումների ամփոփիչ ստուգումն ու գնահատումը՝ ըստ մասնագիտական կրթական ծրագրի վերջնարդյունքների:

Կամընտրական դասընթացների կրթամասը ներառում է բովանդակային կառուցվածքով և կրեդիտներով ամրագրված դասընթացների (ուսումնական մոդուլների) ցանկ, որը միտված է լրացնելու ընդհանուր մասնագիտական և մասնագիտական գիտելիքները, հմտություններն ու կարողունակությունները՝ ըստ մասնագիտական կրթական ծրագրի վերջնարդյունքների:

11. Ծրագրի նպատակը

«Սցենարադրամատուրգիական արվեստ» մասնագիտական կրթական ծրագիրը, էլնելով ԵԹԿՊԻ-ի առաքելությունից, նպատակ ունի մշակույթի և արվեստի ոլորտում պատրաստել աշխատաշուկայի ժամանակակից պահանջներին համապատասխան բարձր որակավորում ունեցող մասնագետների, որոնք կնպաստեն ոլորտի առաջընթացին և զարգացմանը:

«Սցենարադրամատուրգիական արվեստ» մասնագիտական կրթական ծրագիրը նպատակ ունի՝

1. ապահովել սցենարադրամատուրգիական վարպետության հմտությունների, գրականության պատմության և տեսության ուսուցում,
2. աջակցել ուսանողի ստեղծագործական և մասնագիտական կազմակերպական կարողությունների զարգացմանը,
3. ձևավորել մշակույթի և արվեստի զարգացման հիմնախնդիրների վերաբերյալ գիտելիքներ՝ թատերարվեստի, գրականության, կերպարվեստի, երաժշտության, կինոարվեստի, հեռուստատեսության պատմության ու տեսության իմացության հիման վրա,
4. զարգացնել մշակութային երևույթների և դրսևորումների վերլուծության և քննության ունակություն,
5. խթանել հրապարակախոսական և հետազոտական կարողությունները:

12. «Սցենարադրամատուրգիական արվեստ» մասնագիտության ծրագրի կրթական վերջնարդյունքները

Գ. Գիտելիքները

Կրթական ծրագրի հաջող ավարտին ուսանողը կկարողանա՝

Գ 1. տեսորոշել սցենարադրամատուրգիական արվեստի, գրական վարպետության տեսական և գործնական խնդիրները, առանձնահատկությունները, դասական և

- Ժամանակակից դրամատուրգիայի հիմնախնդիրները,
- Գ 2. բնորոշել գրականության զարգացման պատմական փուլերը, գեղագիտական ուղղությունները, ականավոր հեղինակների ստեղծագործական գործունեությունը,
- Գ 3. նշել արդի գրականության զարգացման հիմնախնդիրները, բնագավառի նորույթները,
- Գ 4. ուրվագծել հումանիտար և սոցիալ-մշակութային ոլորտների հիմունքները,
- Գ 5. տարբերակել թատրոնի, կինոյի և հեռուստատեսության, կերպարվեստի, երաժշտության պատմության զարգացման հիմնական փուլերը:

Հմ. Հմտությունները

- Կրթական ծրագրի հաջող ավարտին ուսանողը կկարողանա՝
- Հմ. 1. ստեղծել դրամատուրգիական երկեր, սցենարներ, կատարել փոխադրություններ, բեմականացումներ,
- Հմ. 2. մեկնաբանել արվեստի և գրական ստեղծագործությունների գեղարվեստական առանձնահատկությունները,
- Հմ. 3. ամփոփել գրականության ոլորտային հիմնախնդիրները մշակութային կյանքի համատեքստում՝ ներկայացնելով դրանք մասնագիտական և ոչ մասնագիտական հանրությանը,
- Հմ. 4. դասակարգել մասնագիտական տվյալներ՝ հիմնավորված դատողություններ անելու համար,
- Հմ. 5. հանդես գալ անհատական գրական ստեղծագործությամբ, գրական-քննադատական, գրական-տեսական, հրապարակախոսական, վերլուծական հոդվածներով:

**Կ. Կարողունակությունը
(կոմպետենցիա)**

- Կրթական ծրագրի հաջող ավարտին ուսանողը կկարողանա՝
- Կ 1. պահպանել մասնագիտական էթիկայի նորմերը՝ մասնագիտական փոխգործակցության և հասարակական շփումների համատեքստում,
- Կ 2. որոշել իր կրթական և մասնագիտական հետագա պահանջմունքները,
- Կ 3. վերլուծել և գնահատել սեփական գիտական և ստեղծագործական գործունեության արդյունքները՝ հրապարակումների, հանրային ելույթների և գործընկերների մասնագիտական կարծիքների հիման վրա,
- Կ 4. ծրագրել, համակարգել, իրականացնել և վերահսկել մշակութային նախագծեր, հասարակական, ստեղծագործական նախաձեռնություններ,
- Կ 5. իրականացնել լիարժեք ստեղծագործական մասնագիտական գործունեություն:

13. Գնահատման մեթոդներ

Յուրաքանչյուր դասընթացի համար ընտրված գնահատման մեթոդը հնարավորություն է տալիս առավելագույնս թափանցիկ և անկողմնակալ գնահատել ուսումնառության արդյունքը:

Տեսական դասընթացների համար գնահատման հիմնական մեթոդներն են ընթացիկ առաջադրանքների ստուգումը, գրավոր (բանավոր) միջանկյալ և եզրափակիչ ստուգումները, ռեֆերատները, գրավոր աշխատանքների, նախագծերի պաշտպանությունն ու ցուցադրությունները (պրեզենտացիաները):

Գործնական դասընթացների համար գնահատման հիմնական մեթոդներն են ընթացիկ առաջադրանքների ստուգումը, գործնական աշխատանքների միջանկյալ և եզրափակիչ ստուգումները, հաշվետվությունները, գրավոր աշխատանքների, նախագծերի պաշտպանությունն ու ցուցադրությունները (պրեզենտացիաները):

Տե՛ս «Երևանի թատրոնի և կինոյի պետական ինստիտուտի ուսանողների գիտելիքների ստուգման և գնահատման կարգ»-ը (հաստատված է ԵԹԿՊԻ-ի գիտական խորհրդի 30.08.2016թ. նիստում)

14. Դասավանդման և ուսումնառության մոտեցումներ

Ուսուցումն իրականացվում է ուսանողակենտրոն մոտեցման հենքի վրա:

Տեսական դասընթացներն իրականացվում են հիմնականում դասախոսությունների, այդ թվում՝ ինտերակտիվ, տեսալսողական սարքավորումների, այլ միջոցների կամ համակարգերի կիրառմամբ, ինչպես նաև սեմինար/գործնական պարապմունքների ձևով: Սեմինարներ/գործնական պարապմունքները կազմակերպվում են տեսական նյութի յուրացման կամ ընկալման աստիճանը, տեսական նյութը կիրառելու կամ վերլուծելու, համադրելու և գնահատելու կարողությունը ստուգելու, ինչպես նաև տեսական նյութի շուրջ անհատական/խմբային առաջադրանքների վերաբերյալ քննարկումներ կազմակերպելու նպատակով:

Գործնական դասընթացները միտված են ուսանողին փոխանցելու մասնագիտական գործնական հմտություններ:

Ուսումնառության հիմնական մեթոդներն են թատերական ներկայացումների (նաև տեսագրված) և ֆիլմերի դիտումները, այցելությունները մշակութային հաստատություններ, կազմակերպություններ, ստեղծագործական քննարկումները, անհատական/խմբային գործնական աշխատանքները, գրավոր աշխատանքները:

Ուսումնառության արդյունավետության բարձրացման նպատակով իրականացվում են ընթացիկ խորհրդատվություններ, որպես կանոն, դրանք լինում են անհատական: Ամփոփիչ ատեստավորման նպատակով իրականացվող նախապատրաստական

աշխատանքները նույնպես իրականացվում են անհատական ձևաչափով, ինչը թույլ է տալիս խթանելու ուսանողի անհատական զարգացումը, մասնագիտական կարողությունների համաչափ աճը, մասնագիտական տեղեկատվության ձեռքբերման, համադրման և վերլուծության հարցում ուսանողի ինքնուրույնությունը և քննադատական մտածողությունը:

15. Որակավորման պահանջները, կարգերը

«Սցենարադրամատուրգիական արվեստ» մասնագիտական կրթական ծրագրով Արվեստի տեսության և պատմության բակալավրի որակավորման պահանջն է ավարտական աշխատանքի /դիպլոմային աշխատանքի, նախագծի/ պաշտպանությունն ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովում:

Տե՛ս «ԵԹԿՊԻ-ի մագիստրոսական թեզերին և ավարտական աշխատանքներին ներկայացվող պահանջներ» (հաստատված է ԵԹԿՊԻ-ի գիտական խորհրդի 30.01.2015թ. նիստում)

«Ավարտական աշխատանքների և ավարտական կիսամյակում դասընթացների կազմակերպման և անցկացման կանոնակարգ» (հաստատված է ԵԹԿՊԻ-ի գիտական խորհրդի 30.08.2016թ. նիստում)

16. Մասնագիտական գործունեության ոլորտները

Սցենարադրամատուրգիական արվեստը ստեղծագործական, քննադատական, հետազոտական մասնագիտական գործունեություն է:

Մասնագիտական գործունեության ոլորտներ են՝ թատրոններ, կինոկազմակերպություններ, ՋԼՄ-ներ, մշակութային, կրթական, գիտական հաստատություններ:

17. Հետագա ուսման հնարավորությունները

Սցենարադրամատուրգիական արվեստ մասնագիտական կրթական ծրագրով Արվեստի տեսության և պատմության բակալավրի որակավորման աստիճանը հնարավորություն է տալիս ուսումը շարունակել կրթական հաջորդ աստիճանում՝ մագիստրատուրայում:

«Սցենարադրամատուրգիական արվեստ» ՄԿԾ-ի (բակալավր) ուսումնական պլանը՝
ըստ ուսումնական տարիների և կիսամյակների

Առաջին տարի					
Աշնանային կիսամյակ	Ժամեր	Կրեդիտներ	Գարնանային կիսամյակ	Ժամեր	Կրեդիտներ
ընդհանուր կրթամաս	300	10	ընդհանուր կրթամաս	300	10
ընդհանուր մասնագիտական կրթամաս	300	10	ընդհանուր մասնագիտական կրթամաս	360	12
մասնագիտական կրթամաս	240	8	մասնագիտական կրթամաս	240	8
ճանաչողական պրակտիկա	60	2			
Ընդամենը	900	30	Ընդամենը	900	30

Երկրորդ տարի					
Աշնանային կիսամյակ	Ժամեր	Կրեդիտներ	Գարնանային կիսամյակ	Ժամեր	Կրեդիտներ
ընդհանուր կրթամաս	60	2	ընդհանուր կրթամաս	120	4
ընդհանուր մասնագիտական կրթամաս	240	8	ընդհանուր մասնագիտական կրթամաս	240	8
մասնագիտական կրթամաս	480	16	մասնագիտական կրթամաս	360	12
			ուսումնաարտադրական պրակտիկա	60	2
կամրնտրական դասընթացների կրթամաս	120	4	կամրնտրական դասընթացների կրթամաս	120	4
Ընդամենը	900	30	Ընդամենը	900	30

Երրորդ տարի					
Աշնանային կիսամյակ	Ժամեր	Կրեդիտներ	Գարնանային կիսամյակ	Ժամեր	Կրեդիտներ
ընդհանուր կրթամաս	300	10	ընդհանուր կրթամաս	120	4
ընդհանուր մասնագիտական կրթամաս	-	-	ընդհանուր մասնագիտական կրթամաս	-	-
մասնագիտական կրթամաս	480	16	մասնագիտական կրթամաս	660	22
կամրնտրական դասընթացների կրթամաս	120	4	կամրնտրական դասընթացների կրթամաս	120	4
Ընդամենը	900	30	Ընդամենը	900	30

Չորրորդ տարի					
Աշնանային կիսամյակ	Ժամեր	Կրեդիտներ	Գարնանային կիսամյակ	Ժամեր	Կրեդիտներ
ընդհանուր կրթամաս	-	-	ընդհանուր կրթամաս	-	-
ընդհանուր մասնագիտական կրթամաս	240	8	ընդհանուր մասնագիտական կրթամաս	-	-
մասնագիտական կրթամաս	360	12	մասնագիտական կրթամաս	-	-
նախադիպլոմային պրակտիկա	180	6			
կամրնտրական դասընթացների կրթամաս	120	4	ավարտական աշխատանք	450	15
			ավարտական աշխատանքի պաշտպանություն	450	15
Ընդամենը	900	30	Ընդամենը	900	30

«Սցենարադրամատուրգիական արվեստ» ՄԿԾ (բակալավր) ըստ դասընթացների (մոդուլների)

Ընդհանուր կրթամաս

Դասընթաց (մոդուլ)	Կրեդիտ	Կիսամյակ
Հայոց պատմություն 1	2	1-ին աշուն
Հայոց լեզու 1	2	1-ին աշուն
Ռուսաց լեզու 1	2	1-ին աշուն
Օտար լեզու 1	2	1-ին աշուն
Հայ գրականության պատմություն 1	2	1-ին աշուն
Ֆիզկուլտուրա 1	-	1-ին աշուն

Հայոց պատմություն 2	2	2-րդ գարուն
Հայոց լեզու 2	2	2-րդ գարուն
Ռուսաց լեզու 2	2	2-րդ գարուն
Օտար լեզու 2	2	2-րդ գարուն
Հայ գրականության պատմություն 2	2	2-րդ գարուն
Ֆիզկուլտուրա 2	-	2-րդ գարուն

Արևմտյան գրականության պատմություն 1	2	3-րդ աշուն
Ֆիզկուլտուրա 3	-	3-րդ աշուն

Արևմտյան գրականության պատմություն 2	2	4-րդ գարուն
Ռուս գրականության պատմություն 1	2	4-րդ գարուն
Ֆիզկուլտուրա 4	-	4-րդ գարուն

Արևմտյան գրականության պատմություն 3	2	5-րդ աշուն
Ռուս գրականության պատմություն 2	2	5-րդ աշուն
Փիլիսոփայություն	4	5-րդ աշուն
Հոգեբանության հիմունքներ	2	5-րդ աշուն

Գեղագիտություն	4	6-րդ գարուն
----------------	---	-------------

Ընդհանուր մասնագիտական կրթամաս

Դասընթաց (մոդուլ)	Կրեդիտ	Կիսամյակ
Դիցաբանություն 1	2	1-ին աշուն
Կերպարվեստի պատմություն 1	4	1-ին աշուն
Դերասանի վարպետ. և ռեժիսուրայի հիմ. 1	2	1-ին աշուն
Գեղարվեստական խոսք 1	2	1-ին աշուն

Դիցաբանություն 2	4	2-րդ գարուն
Կերպարվեստի պատմություն 2	2	2-րդ գարուն
Դերասանի վարպետ. և ռեժիսուրայի հիմ. 2	4	2-րդ գարուն
Գեղարվեստական խոսք 2	2	2-րդ գարուն

Երաժշտության պատմություն	4	3-րդ աշուն
Ոճաբանություն	2	3-րդ աշուն
Գրաբար	2	3-րդ աշուն

Գրականության տեսություն	4	4-րդ գարուն
Դրամայի տեսություն	2	4-րդ գարուն
Հոնտորական արվեստ	2	4-րդ գարուն

Արվեստի կառավարման հիմունքներ	4	7-րդ աշուն
Սոցիոլոգիայի հիմունքներ	4	7-րդ աշուն

Մասնագիտական կրթամաս

Դասընթաց (մոդուլ)	Կրեդիտ	Կիսամյակ
Գրական վարպետություն 1	4	1-ին աշուն
Թատրոնի պատմություն 1	4	1-ին աշուն
Ճանաչողական պրակտիկա	2	1-ին աշուն

Գրական վարպետություն 2	4	2-րդ գարուն
Թատրոնի պատմություն 2	4	2-րդ գարուն

Գրական վարպետություն 3	8	3-րդ աշուն
Հայ գրականություն	4	3-րդ աշուն
Կինոյի պատմություն 1	4	3-րդ աշուն

Գրական վարպետություն 4	8	4-րդ գարուն
Կինոյի պատմություն 2	4	4-րդ գարուն
Ուսումնասիրատարական պրակտիկա	2	4-րդ գարուն

Կամրնտրական դասընթացների կրթամաս

Դասընթաց (մոդուլ)	Կրեդիտ	Կիսամյակ
Ընտրովի դասընթաց/ներ	4	3-րդ աշուն
Ընտրովի դասընթաց/ներ	4	4-րդ գարուն
Ընտրովի դասընթաց/ներ	4	5-րդ աշուն
Ընտրովի դասընթաց/ներ	4	6-րդ գարուն
Ընտրովի դասընթաց/ներ	4	7-րդ աշուն

Մասնագիտական կրթամաս

Դասընթաց (մոդուլ)	Կրեդիտ	Կիսամյակ
Գրական վարպետություն 5	8	5-րդ աշուն
Լրագրության հիմունքներ	4	5-րդ աշուն
Մեւ և ծիսակատարություն	4	5-րդ աշուն

Գրական վարպետություն 6	8	6-րդ գարուն
Եվրոպական գրականություն	4	6-րդ գարուն
Ռուս գրականություն	4	6-րդ գարուն
Հեռուստատեսության հիմունքներ	4	6-րդ գարուն
Խմբագրի վարպետություն	2	6-րդ գարուն

Գրական վարպետություն 7	8	7-րդ աշուն
Սցենարիստի աշխատանքը ռեժիսորի հետ	4	7-րդ աշուն
Նախադիպրոմային պրակտիկա	6	7-րդ աշուն

Ավարտական աշխատանք	15	8-րդ գարուն
Ավարտական աշխատանքի պաշտպանություն	15	8-րդ գարուն

«Մցենարադրամատուրգիական արվեստ» (բակալավր) ՄԿԾ-ում վերջնարդյունքների հանդեպ կիրառվող դասավանդման/ուսումնառության և գնահատման մեթոդներ

Գ.	Գիտելիքները	Դասավանդման/ ուսումնառության մեթոդները	Գնահատման մեթոդները
Գ 1.	տեսորոշել սցենարադրամատուրգիական արվեստի, գրական վարպետության տեսական և գործնական խնդիրները, առանձնահատկությունները, դասական և ժամանակակից դրամատուրգիայի հիմնախնդիրները	<ul style="list-style-type: none"> ✓ դասախոսություն, այդ թվում՝ ինտերակտիվ, տեսալսողական սարքավորումների, այլ միջոցների կամ համակարգերի կիրառմամբ ✓ քննարկումներ ✓ թատերական ներկայացումների (նաև տեսագրված) և ֆիլմերի դիտումներ ✓ այցելություններ մշակութային հաստատություններ, կազմակերպություններ 	<ul style="list-style-type: none"> ✓ գրավոր առաջադրանքներ (ռեֆերատ, նախագիծ, հոդված, այլ) ✓ բանավոր պատասխաններ (հարցազրույց, ա. թ.՝ քննական տոմսերի կիրառմամբ, զեկույց, պրեզենտացիա, այլ)
Գ 2.	բնորոշել գրականության զարգացման պատմական փուլերը, զեղագիտական ուղղությունները, ակնավոր հեղինակների ստեղծագործական գործունեությունը	<ul style="list-style-type: none"> ✓ դասախոսություն, այդ թվում՝ ինտերակտիվ, տեսալսողական սարքավորումների, այլ միջոցների կամ համակարգերի կիրառմամբ ✓ քննարկումներ ✓ թատերական ներկայացումների (նաև տեսագրված) և ֆիլմերի դիտումներ 	<ul style="list-style-type: none"> ✓ գրավոր առաջադրանքներ (ռեֆերատ, նախագիծ, հոդված, այլ) ✓ բանավոր պատասխաններ (հարցազրույց, ա. թ.՝ քննական տոմսերի կիրառմամբ, զեկույց, պրեզենտացիա, այլ)
Գ 3.	նշել արդի գրականության զարգացման հիմնախնդիրները, բնագավառի նորույթները	<ul style="list-style-type: none"> ✓ դասախոսություն, այդ թվում՝ ինտերակտիվ, տեսալսողական սարքավորումների, այլ միջոցների կամ համակարգերի կիրառմամբ ✓ քննարկումներ ✓ թատերական ներկայացումների (նաև տեսագրված) և ֆիլմերի դիտումներ 	<ul style="list-style-type: none"> ✓ գրավոր առաջադրանքներ (ռեֆերատ, նախագիծ, հոդված, այլ) ✓ բանավոր պատասխաններ (հարցազրույց, ա. թ.՝ քննական տոմսերի կիրառմամբ, զեկույց, պրեզենտացիա, այլ)
Գ 4.	ուրվագծել հումանիտար և սոցիալ-մշակութային ոլորտների հիմունքները	<ul style="list-style-type: none"> ✓ դասախոսություն, այդ թվում՝ ինտերակտիվ, տեսալսողական 	<ul style="list-style-type: none"> ✓ գրավոր առաջադրանքներ (ռեֆերատ, նախագիծ, հոդված, այլ)

		<ul style="list-style-type: none"> սարքավորումների, այլ միջոցների կամ համակարգերի կիրառմամբ ✓ քննարկումներ ✓ անհատական/հսկային առաջադրանքներ 	<ul style="list-style-type: none"> ✓ բանավոր պատասխաններ (հարցազրույց, ա. թ.՝ քննական տոմսերի կիրառմամբ, զեկույց, պրեզենտացիա, այլ)
Գ 5.	տարբերակել թատրոնի, կինոյի և հեռուստատեսության, կերպարվեստի, երաժշտության պատմության զարգացման հիմնական փուլերը	<ul style="list-style-type: none"> ✓ դասախոսություն, այդ թվում՝ ինտերակտիվ, տեսալսողական սարքավորումների, այլ միջոցների կամ համակարգերի կիրառմամբ ✓ քննարկումներ ✓ թատերական ներկայացումների (նաև տեսագրված) և ֆիլմերի դիտումներ ✓ այցելություններ մշակութային հաստատություններ, կազմակերպություններ 	<ul style="list-style-type: none"> ✓ գրավոր առաջադրանքներ (ռեֆերատ, նախագիծ, հոդված, այլ) ✓ բանավոր պատասխաններ (հարցազրույց, ա. թ.՝ քննական տոմսերի կիրառմամբ, զեկույց, պրեզենտացիա, այլ)
Հմ.	Հմ. Հմտությունները	Դասավանդման/ ուսումնառության մեթոդները	Գնահատման մեթոդները
Հմ 1.	ստեղծել դրամատուրգիական երկեր, սցենարներ, կատարել փոխադրություններ, բեմականացումներ	<ul style="list-style-type: none"> ✓ սեմինար/գործնական աշխատանք ✓ անհատական/հսկային առաջադրանքներ ✓ քննարկումներ ✓ ռեֆերատ/գրավոր աշխատանք ✓ պրակտիկա 	<ul style="list-style-type: none"> ✓ գրավոր առաջադրանքներ (հաշվետվություն, վերլուծական շարադրանք, այլ) ✓ բանավոր պատասխաններ (հարցազրույց, զեկույց, պրեզենտացիա, այլ) ✓ պրակտիկայի հաշվետվություն
Հմ 2.	մեկնաբանել արվեստի և գրական ստեղծագործությունների գեղարվեստական առանձնահատկությունները	<ul style="list-style-type: none"> ✓ սեմինար/գործնական աշխատանք ✓ անհատական/հսկային առաջադրանքներ ✓ քննարկումներ ✓ ռեֆերատ/գրավոր աշխատանք 	<ul style="list-style-type: none"> ✓ գրավոր առաջադրանքներ (հաշվետվություն, վերլուծական շարադրանք, այլ) ✓ բանավոր պատասխաններ (հարցազրույց, զեկույց, պրեզենտացիա, այլ)
Հմ 3.	անփոփել գրականության ոլորտային հիմնական դիրքերը մշակութային կյանքի համատեքստում՝ ներկայացնելով դրանք մասնագիտական և ոչ մասնագիտական հանրությանը	<ul style="list-style-type: none"> ✓ սեմինար/գործնական աշխատանք ✓ անհատական/հսկային առաջադրանքներ ✓ քննարկումներ ✓ ռեֆերատ/գրավոր աշխատանք ✓ պրակտիկա 	<ul style="list-style-type: none"> ✓ գրավոր առաջադրանքներ (հաշվետվություն, վերլուծական շարադրանք, այլ) ✓ բանավոր պատասխաններ (հարցազրույց, զեկույց, այլ) ✓ պրակտիկայի հաշվետվություն

Հմ 4.	դասակարգել մասնագիտական տվյալներ՝ հիմնավորված դատողություններ անելու համար	<ul style="list-style-type: none"> ✓ սեմինար/գործնական աշխատանք ✓ անհատական/խմբային առաջադրանքներ ✓ քննարկումներ ✓ ռեֆերատ/գրավոր աշխատանք ✓ պրակտիկա 	<ul style="list-style-type: none"> ✓ գրավոր առաջադրանքներ (հաշվետվություն, վերլուծական շարադրանք, այլ) ✓ բանավոր պատասխաններ (հարցազրույց, զեկույց, պրեզենտացիա, այլ) ✓ պրակտիկայի հաշվետվություն
Հմ 5.	հանդես գալ անհատական գրական ստեղծագործությամբ, գրական-քննադատական, գրական-տեսական, հրապարակախոսական, վերլուծական հոդվածներով	<ul style="list-style-type: none"> ✓ սեմինար/գործնական աշխատանք ✓ անհատական/խմբային առաջադրանքներ ✓ քննարկումներ ✓ ռեֆերատ/գրավոր աշխատանք ✓ պրակտիկա 	<ul style="list-style-type: none"> ✓ գրավոր առաջադրանքներ (հաշվետվություն, վերլուծական շարադրանք, այլ) ✓ բանավոր պատասխաններ (հարցազրույց, զեկույց, պրեզենտացիա, այլ) ✓ պրակտիկայի հաշվետվություն
Կ.	Կ. Կարողունակությունը (կոմպետենցիա)	Դասավանդման/ ուսումնառության մեթոդները	Գնահատման մեթոդները
Կ 1.	պահպանել մասնագիտական էթիկայի նորմերը՝ մասնագիտական փոխգործակցության և հասարակական շփումների համատեքստում	<ul style="list-style-type: none"> ✓ դասախոսություն ✓ անհատական/խմբային առաջադրանքներ ✓ քննարկումներ 	<ul style="list-style-type: none"> ✓ գրավոր առաջադրանքներ (նախագիծ, հոդված, հաշվետվություն, վերլուծական շարադրանք, այլ) ✓ բանավոր պատասխաններ (հարցազրույց, զեկույց, պրեզենտացիա, այլ)
Կ 2.	որոշել իր կրթական և մասնագիտական հետագա պահանջումները	<ul style="list-style-type: none"> ✓ դասախոսություն ✓ անհատական/խմբային առաջադրանքներ ✓ քննարկումներ 	<ul style="list-style-type: none"> ✓ գրավոր առաջադրանքներ (նախագիծ, հոդված, հաշվետվություն, վերլուծական շարադրանք, այլ) ✓ բանավոր պատասխաններ (հարցազրույց, զեկույց, պրեզենտացիա, այլ)
Կ 3.	վերլուծել և գնահատել սեփական գիտական և ստեղծագործական գործունեության արդյունքները՝ հրապարակումների, հանրային ելույթների և գործընկերների մասնագիտական կարծիքների հիման վրա	<ul style="list-style-type: none"> ✓ դասախոսություն ✓ անհատական/խմբային առաջադրանքներ ✓ քննարկումներ 	<ul style="list-style-type: none"> ✓ գրավոր առաջադրանքներ (նախագիծ, հոդված, հաշվետվություն, վերլուծական շարադրանք, այլ) ✓ բանավոր պատասխաններ (հարցազրույց, զեկույց, պրեզենտացիա, այլ)

Կ 4.	ծրագրել, համակարգել, իրականացնել և վերահսկել մշակութային նախագծեր, հասարակական, ստեղծագործական նախաձեռնություններ	<ul style="list-style-type: none"> ✓ դասախոսություն ✓ անհատական/խմբային առաջադրանքներ ✓ քննարկումներ 	<ul style="list-style-type: none"> ✓ գրավոր առաջադրանքներ (նախագիծ, հոդված, հաշվետվություն, վերլուծական շարադրանք, այլ) ✓ բանավոր պատասխաններ (հարցազրույց, զեկույց, պրեզենտացիա, այլ)
Կ 5.	իրականացնել լիարժեք ստեղծագործական մասնագիտական գործունեություն	<ul style="list-style-type: none"> ✓ անհատական/խմբային առաջադրանքներ ✓ քննարկումներ 	<ul style="list-style-type: none"> ✓ գրավոր առաջադրանքներ (նախագիծ, հոդված, հաշվետվություն, վերլուծական շարադրանք, այլ) ✓ բանավոր պատասխաններ (հարցազրույց, զեկույց, պրեզենտացիա, այլ)

«Սցենարադրամատորգիական արվեստ» ՄԿԾ-ի (բակալավր) բովանդակությունը՝
ըստ կրթական վերջնարդյունքների

Դասընթացներ/մոդուլներ	Կրթական վերջնարդյունքներ														
	Գիտելիքներ (Գ.)					Հմտություններ (Հմ.)					Կարողունակություն (Կ.)				
	1	2	3	4	5	1	2	3	4	5	1	2	3	4	5
1-ին տարի 1-ին կիսամյակ															
Հայոց պատմություն 1				+				+							
Հայոց լեզու 1				+				+		+					
Ռուսաց լեզու 1				+				+		+					
Օտար լեզու 1				+				+		+					
Հայ գրականության պատմություն 1		+	+				+	+							
Դիցաբանություն 1		+			+		+								
Կերպարվեստի պատմություն 1					+		+								
Դերասանի վարպետության և ռեժիսուրայի հիմունքներ 1	+						+	+				+			+
Գեղարվեստական խոսք 1	+						+	+				+			+
Գրական վարպետություն 1	+	+	+				+	+	+	+		+		+	
Թատրոնի պատմություն 1					+		+	+							+
Ճանաչողական պրակտիկա							+	+				+	+		+
1-ին տարի 2-րդ կիսամյակ															
Հայոց պատմություն 2				+				+							
Հայոց լեզու 2				+				+		+					
Ռուսաց լեզու 2				+				+		+					
Օտար լեզու 2				+				+		+					
Հայ գրականության պատմություն 2		+	+				+	+							

Դիցաբանություն 2		+			+		+							
Կերպարվեստի պատմություն 2					+		+							
Դերասանի վարպետության և ռեժիսուրայի հիմունքներ 2	+						+	+				+		+
Գեղարվեստական խոսք 2	+						+	+				+		+
Գրական վարպետություն 2	+	+	+				+	+	+	+		+		+
Թատրոնի պատմություն 2					+		+	+						+
2-րդ տարի 1-ին կիսամյակ														
Արևմտյան գրականության պատմություն 1		+	+					+	+					
Երաժշտության պատմություն					+			+						
Ոճաբանություն	+						+				+			
Գրաբար	+	+					+	+						
Գրական վարպետություն 3	+	+	+				+	+	+	+	+		+	
Հայ գրականություն		+	+					+	+					+
Կինոյի պատմություն 1					+			+	+					+
Ընտրովի դասընթաց	+	+	+					+	+					+
2-րդ տարի 2-րդ կիսամյակ														
Արևմտյան գրականության պատմություն 2		+	+					+	+					
Ռուս գրականության պատմություն 1		+	+					+	+					
Գրականության տեսություն	+	+						+		+				
Դրամայի տեսություն	+	+						+		+				
Հրեռորական արվեստ					+				+		+			
Գրական վարպետություն 4	+	+	+				+	+	+	+	+		+	
Կինոյի պատմություն 2					+			+	+					+
Ուսումնասիրտադրական պրակտիկա							+		+	+		+	+	+
Ընտրովի դասընթաց	+	+	+					+	+					+
3-րդ տարի 1-ին կիսամյակ														
Արևմտյան գրականության պատմություն 3		+	+					+	+					
Ռուս գրականության պատմություն 2		+	+					+	+					
Փիլիսոփայություն					+			+		+		+	+	
Հոգեբանության հիմունքներ					+			+			+	+		

Գրական վարպետություն 5	+	+	+			+	+	+	+	+	+	+	+	+	+
Լրագրության հիմունքներ				+						+					
Ծես և ծիսակատարություն				+			+								
Ընտրովի դասընթաց	+	+	+					+	+						+
3-րդ տարի 2-րդ կիսամյակ															
Գեղագիտություն				+			+		+				+		
Գրական վարպետություն 6	+	+	+			+	+	+	+	+	+	+	+	+	+
Եվրոպական գրականություն			+	+				+	+						+
Ռուս գրականություն			+	+				+	+						+
Հեռուստատեսության հիմունքներ					+		+								
Խմբագրի վարպետություն	+					+			+						+
Ընտրովի դասընթաց	+	+	+					+	+						+
4-րդ տարի 1-ին կիսամյակ															
Արվեստի կառավարման հիմունքներ				+				+	+		+			+	
Սոցիոլոգիայի հիմունքներ				+				+	+			+		+	
Գրական վարպետություն 7	+	+	+			+	+	+	+	+	+	+	+	+	+
Սցենարիստի աշխատանքը ռեժիսորի հետ	+					+									
Նախադիպումային պրակտիկա						+		+	+	+	+	+	+	+	+
Ընտրովի դասընթաց	+	+	+					+	+						+
4-րդ տարի 2-րդ կիսամյակ															
Ավարտական աշխատանք	+	+	+	+		+	+	+	+	+	+	+	+	+	+
Ավարտական աշխատանքի պաշտպանություն						+	+	+	+	+	+	+	+	+	+